Արդ, ողջ առաքինութեան հիմքը խոնարհութիւնն է, եւ բոլոր սուրբերը խոնարհութեամբ են հաճոյ եղել Աստծուն: Ինչպէս Աբրահամն էր խոնարհւում եւ ասում. «Ես հող եմ ու մոխիր», դրա համար նահապետների գլուխ եղաւ: Այսպէս եւ Դաւիթն էր ասում. «Ես որդ եմ եւ ոչ մարդ, նախատինք եմ մարդկանց համար», դրա համար Աստծուց մարգարէութեան շնորհ ստացաւ եւ կանչուեց ժողովրդին թագաւորելու: Այսպէս եւ Եսային էր ասում. «Վա՜յ ինձ, որովհետեւ պիղծ շուրթեր ունեմ», դրա համար աստուածաբան կոչուեց մարգարէների մէջ: Այսպէս եւ Կարապետն էր ասում. «Արժանի չեմ արձակելու նրա կօշիկների կապերը», դրա համար արժանի եղաւ Քրիստոսին մկրտելու: Այսպէս եւ Պետրոսն էր ասում. «Հեռո՛ւ գնա ինձանից, Տէ՛ր, որովհետեւ մեղաւոր մարդ եմ ես», դրա համար երկնքի արքայութեան բանալիները ստացաւ եւ Եկեղեցու հիմք եղաւ: Այսպէս եւ Պօղոսն է ասում. «Արժանի չեմ առաքեալ կոչուելու», դրա համար երկինք թռաւ եւ դրախտ տեսաւ:

II

Արդ, քանզի խոնարհութիւնն է ողջ առաքինութեան գլուխը, ուստի մարգարէն ասում է. «Աստուած չի արհամարհում խոնարհ հոգին եւ սուրբ սիրտը»: Եւ Եսային ասում է. «Ես որտե՞ղ բնակուեմ, եթէ ոչ հեզերի, խոնարհների մէջ»: Եւ Նոյն Ինքը՝ Տէրը, ասում էր. «Ով խոնարհեցնում է իր անձը, կը բարձրանայ»: Եւ Պօղոսն ասում է. «Ամենայն խոնարհութեամբ միմեանց պէտք է աւելի լաւ համարել, քան ինքներդ ձեզ» [Փիլիպ. Բ 3]: Եւ վարդապետներից անթիւ վկայութիւններ կան խոնարհութեան մասին, քանզի ոչ ոք Աստծուն այնպէս սիրելի չէ, ինչպէս նա, ով խոնարհ է եւ իրեն յետին է համարում՝ յանուն Քրիստոսի, որովհետեւ Նրան վայել է փառք եւ իշխանութիւն այժմ եւ յաւիտեանս, ամէն:

ՎԱՍՆ ՈՐ Ի ՍՈՒՐԲՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՇԻՆՈՒԱԾՔ՝ ԹՈՒՈՎ ԵՒ ՀԻՄՆԱԴՐԵԼՈՎ

Ալեքսան Յակոբեան

ԱՌԱՋԱԲԱՆ

Ը. դարի սկզբի անանուն հեղինակի «Վասն որ ի սուրբն Երուսաղէմ եկեղեցւոյ շինուածք՝ թուով եւ հիմնադրելով» վերտառութեամբ գրութիւնը պահպանուել է միայն Ժ. դարի վերջի պատմիչ Մովսէս Դասխուրանցու (ուշ ձեռագրերում՝ եւ գրականութեան մէջ կոչուած նաեւ Կաղանկատուացի) Պատմութիւն Աղուանից երկում (գիրք Բ, գլուխ ԾԱ): Դա մի փոքրածաւալ երկ է Երուսաղէմ քաղաքի ու նրա շրջակայքի սուրբ վայրերից գլխաւորների մասին: Բովանդակութեան քննութիւնից երեւում է, որ երկն, ըստ ամենայնի, ամբողջական է, թէպէտ հնարաւոր չէ մինչեւ վերջ պարզել նրա ստեղծման հանգամանքները: Պարզ է միայն, որ Մովսէս Դասխուրանցին այն յայտնաբերել է Աղուանից կաթողիկոսարանում իր ձեռքի տակ գտնուած մի ժողովածոյում, որում հաւաքուած էին զանազան նիւթեր, ինչպէս որ այլ դէպքերում ունենք միջնադարեան տարբեր հոգեւոր կենտրոններում ստեղծուած տոհմամատեան-ժողովածոներում՝ քեսթուկներում:

Մենք ունենք վաղ միջնադարեան եւս մի գրութիւն, որտեղ բաւական հանգամանալից ներկայացուած են Երուսաղէմի վանքերն ու եկեղեցիները, ճիշտ է՝ միայն հայկական: Դա Անաստաս վարդապետ Յերասղոսեցու կազմած «Վասն վանորէից Հայոց, որ ի սուրբ քաղաքն Յերուսաղէմ» փոքրածաւալ երկն է, որի մի տարբերակից քաղուածաբար օգտուել է նաեւ Մովսէս Դասխուրանցին՝ շարադրելով իր Պատմութիւն Աղուանիցի Բ. գրքի յաջորդ (վերջին) գլուխը (ԾԲ): Հնարաւոր է ենթադրել, որ Ժ. դարի վերջի պատմիչի օգտագործած ժողովածոյում եւս վերջինս եւ մեր Անանունի գրուածքը գտնուել են կողք կողքի: Այդ դէպքում, գուցէ, տեղին է նաեւ ընդունել այն վարկածը, թէ այդ երկուսը միեւնոյն ծագումն ունեն՝ եթէ ոչ հեղինակի, ապա գոնէ ստեղծման հանգամանքների իմաստով:

Ըստ այդմ, թէ՛ Անաստաս վարդապետի, թէ՛ Անանունի ցուցակների գրառումն աւելի հաւանական է կապել 703 թ. իրագործուած Սահակ Զորոփորեցի կաթողիկոսի (677/8-703 թթ.)՝ դէպի Ասորիք ուղեւորութեան նախապատրաստական աշխատանքների հետ, երբ կազմակերպիչները զիտակ վարդապետներին խնդրել են ինչ-ինչ տեղեկանք-ուղեցոյցներ կազմել մեկնողների համար: Եւ այդպիսով կարելի է դրանք թուագրել 700-ական թթ. սկզբներով: Նշուած աշխատանքների մասին առաւել մանրամասն պատմող Ղեւոնդ վարդապետի եւ Շապուհ Բագրատունու տեղեկութիւններից երեւում է, որ Դամասկոսում արաբ խալիֆային այցելելուց յետոյ ծերունազարդ կաթողիկոսի խմբի ուղեւորութիւնը նախատեսուած էր հասցնել մինչեւ Երուսաղէմ, թէպէտ վեհափառի վաղաժամ մահուան պատճառով դա յաջողուեց անել միայն նրա ուղեկիցներից ոմանց:

Շապուհ Բագրատունու անունով յայտնի Պատմութեան մի պահպանուած կտորում այս ուղեւորութեան առիթով յիշատակւում է Վահան Կամսարական (պահպանուած միակ ձեռագրում՝ Կամեսական) իշխանի անունը, որը դժուար չէ ենթադրաբար զուգադրել Անաստաս վարդապետի գրութեան պատուիրատու Համա-

զասպ Կամսարականի (ըստ առանձին պահպանուած տարբերակի) եւ Վահան Մամիկոնեանի (ըստ Մովսէս Դասխուրանցու Բ.ծք գլխի վերնագրում պահպանուած տարբերակի) անունների հետ: Թէպէտ հնարաւոր է նաեւ առաւել մեծ հաւանականութեամբ ենթադրել, որ Սահակ Զորոփորեցու ուղեւորութեանը մասնակցել են ե՛ւ Կամսարական, ե՛ւ Մամիկոնեան իշխանները: Ընդ որում, նրանցից իւրաքանչիւրի մօտ կարող էր լինել Անաստաս Յերապոլսեցի վարդապետի երկի (կամ կազմած փաթեթի) սեփական եւ անուանական օրինակը. այս դէպքում կարող ենք ենթադրել, որ եթէ «Վասն վանորէից Հայոց, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ» երկի՝ մեզ հասած ընդարձակ տարբերակը յանգում է իրօք Համազասպ Կամսարականի «պատուիրած» օրինակին, ապա Մովսէս Դասխուրանցու օգտագործած բնագիրը յանգում է իրօք Վահան Մամիկոնեանի «պատուիրածին»:

Անանունի փոքրածաւալ երկն, ըստ Հ. Ն. Ակինեանի եւ միւս հետազօտողների՝ հաւաստի եւ աղբիւրագիտական որոշակի արժէք ներկայացնող տեղեկութիւններ է շարադրում Սուրբ երկրի մասին:

Պատմութիւն Աղուանից-ի *գրչագրերի երկու խմբերի (a ձեռագիր եւ bclrv ձեռագրեր՝ bl եւ crv ենթախմբերով) օգտագործմամբ կազմուած Անանունի գրութեան քննական բնագիրը մեծ հաւանականութեամբ պատկերացում է տալիս նրա ուղեորդարեան վիճակի մասին: Ստորեւ ներկայացուած բնագրի տողատակերում հաշուի չեն առնուած Մովսէս Դասխուրանցու* Պատմութիւն Աղուանից-ի *երկու տասնեակից աւելի մնացեալ գրչագրերի տարընթերցումները, քանի որ դրանք հաստատապէս արտագրուել են վերը նշուած վեց ձեռագրերից որեւէ մէկից եւ չեն կարող օգտակար համարուել հեղինակի ինքնագրի վերականգնման հարցում: Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մատենադարանի թիւ 1485 ձեռագրի (v) ընթերցումները, ցաւօք, չենք կարողացել համեմատել տեխնիկական պատճառներով: Բնագրի տողատման եւ կէտադրման խնդրում էապէս օգտուել ենք* Պատմութիւն Աղուանից-ի *համեմատական հրատարակութեան հեղինակ Վարագ Առաքելեանի կատարած աշխատանքից:*

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

1. **Ն. Ադոնց**, *Քննութիւն Մովսէս Կաղանկատուացու*, աշխատասիրել, ծանօթագրել եւ ներածութիւնը գրել է Պ. Յովհաննիսեանը, Վաղարշապատ-Ս. Էջմիածին, 2005
2. **Հ. Ն. Ակինեան**, *Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից*, Վիեննա, 1970
3. **Մ. եպս. Աղաւնունի**, *Միաբանք եւ այցելուք հայ Երուսաղէմի*, Երուսաղէմ, 1929
4. **Մ. եպս. Աղաւնունի**, *Հայկական հին վանքեր եւ եկեղեցիներ Սուրբ Երկրին մէջ*. Ուսումնասիրութիւններ, Երուսաղէմ, 1931
5. **Անաստաս վարդապետ Յերապոլսեցի**, *Վասն վանորէից, որ ի սուրբ քաղաքն յԵրուսաղէմ*, առաջաբանը եւ քննական բնագիրը Պ. Զորբանեանի, - «Մատենագիրք Հայոց», Ե. հատոր, Է. դար, Անթիլիաս, 2005, էջ 1271-1279
6. **Կ. Ղահրամանեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Պատմութիւն Աղուանից աշխարհի» երկի աղբիւրները*, Երեւան, 1974
7. **Ղեւոնդ վարդապետ**, *Պատմաբանութիւն*, առաջաբանը եւ քննական բնագիրը **Գ. Տէր-Վարդանեանի**,- «Մատենագիրք Հայոց», Զ հատոր, Ը. դար, Անթիլիաս, 2007, էջ 709-851
8. **Ա. Շ. Մնացականեան**, *Աղուանից աշխարհի գրականութեան հարցերի շուրջը*, Երեւան, 1966
9. **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, քննական բնագիրը եւ ներածութիւնը Վ. Առաքելեանի, Երեւան, 1983
10. **Ա. Յակոբեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» ձեռագրերը*,- «Բանբեր Մատենադարանի», թիւ 15, Երեւան, 1986
11. **Ա. Յակոբեան**, *Աղուանից իշխանների ժամանակագրութիւնը Է. դարի վերջին - Ը. դարի սկզբին*,- «Հանդէս ամսօրեայ», ՃԺԸ. տարի, Վիեննա-Երեւան, 2004
12. *Պատմութիւն* **Ճապոյ Բագրատունւոյ**, ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Մեսրոպ եպիսկոպոս, Վաղարշապատ, 1921
13. **Պ. Ա. Զորբանեան**, *Անաստաս վարդապետի կազմած Երուսաղէմի հայկական վանքերի Յուցակի ժամանակի հարցի շուրջ*,- «Պատմա-բանասիրական հանդէս», Երեւան, 2001, թիւ 1
14. **Հ. Ս. Սւազեան**, *Մովսէս Կաղանկատուացու «Աղուանից պատմութեան» աղբիւրները*,- «Պատմա-բանասիրական հանդէս», Երեւան, 1972, թիւ 2
15. **А. А. Акопян**. Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван, 1987
16. *The History of the Caucasian Albanians* by **Movsés Dasxuranci**. Translated by **C. J. F. Dowsett**. London, 1961
17. **A. K. Sanjian**. Anastas Vardapet's List of Armenian Monasteries in sevent-century Jerusalem. A critical Examination. - "Le Muséon", LXXXII, 3-4, Bruxelles, 1969

ՏԱՌԱՆԻՇԵՐ ԲԱՂԴԱՏՈՒԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ

a - ՄՄ ձեռ. թիւ 1531, ժամանակը՝ 1289 թ.

b - ՄՄ ձեռ. թիւ 1725, ժամանակը՝ 1675 թ.

c - ՄՄ ձեռ. թիւ 2561, ժամանակը՝ 1664 թ.

l - Ռուսաստանի Գիտութիւնների ակադեմիայի Արեւելագիտութեան ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքի գրադարանի հայերէն ձեռագրերի հաւաքածոյ, թիւ C 59, ժամանակը՝ 1678 թ.

r - Բրիտանական թանգարանի թիւ Or 5261, ժամանակը՝ ԺԷ դ.

[1]ՎԱՍՆ ՈՐ Ի ՍՈՒՐԲՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԵԿԵՂԵՑԻՈՅ[2] ՇԻՆՈՒԱԾՔ՝ ԹՈՒՈՎ ԵՒ[3] ՀԻՄՆԱԴՐԵԼՈՎ. [ԵՒ[4] ԶՍՏՈՅԳՆ[5] ԳՏՑԵՍ[6] ԱՆԴԱՆԱՒՐ[7]]

Անձնաչափ Կենարարին Քրիստոսի լայնութիւն տապանափորած վիմին՝ գիրկ եւ[8] կէս: Հեռի են, ի միջի գմբեթէն[9], սրբոյ[10] կենարար գերեզմանէն եւ ի վերայ սեանցն՝ գմբեթաձեւ[11] ի վերայ եկեղեցւոյն[12], որ շինեալ է՝ հարիւր կանգուն բարձրութիւնն եւ հարիւր՝ լայնութիւնն, բոլոր՝ յայն եւ յայն՝ երկոտասան սիւնք ներքոյ եւ երկոտասան՝ վերոյ վերնատանն: Եւ յայն վերնատանն՝ գեղարդն եւ սպունգն[13] եւ սկաւառակն Քրիստոսի՝ պատեալ ոսկով[14]:

Իսկ եկեղեցին Կաթողիկէ[15], որ Մատուռն անուանի, որ է[16] գիւտ խաչի՝ քսան կանգուն հեռագոյն ի Յարութենէն, վախսուն եւ հինգ սիւն վեր[17] եւ ի[18] ներքոյ երկայնութիւն:

Իսկ Սուրբ Գողգոթայի[19] եկեղեցին[20] տասն քայլ հեռի էր[21] ի[22] Յարութենէն, որ Ադամայ[23] գերեզման[24] կոչի, ներքոյ եւ ի վերոյ՝ սեղան[25] խորհրդոյ, յորում խաչեցաւ Քրիստոս ի վիմին վերայ:

Իսկ Սուրբ Սիոնի[26] եկեղեցին՝ միով ասպարիսաւ բացագոյն ի Յարութենէն, հարիւր կանգուն ի յերկայնն եւ եօթանասուն՝ ի[27] լայնն, ութսուն սեամբք կամարակապաւք: Եւ չէ[28] վերնատանաւք[29], այլ թարբ կապեալ է փայտեայ[30], եւ պակ փշոյն կայ[31] ի կախ[32] զթարբէն, որ[33] եդին Կենարարին ի գլուխ: Եւ յաջմէ եկեղեցւոյն[34] վերնատունն խորհրդոյ եւ փայտեայ[1]

1 *Վերնագրից առաջ Մովսէս Դասխուրանցին նշանակել է իր երկի երկրորդ գրքի համապատասխան գլխահամարը՝* ԾԱ *(r գրչագրում՝* ԾԲ*):*
2 *b* եկեցոյ, *cr* եկեղեցոյ *փխ* եկեղեցւոյ *(al)*
3 *b* եւ ով, *cr* եւ չափով, *l* եւ գրով *(a)*
4 *l չիք* եւ
5 *a* ստոյգն *փխ* զստոյգն *(bclr) (գուցէ վերականգնելի է՝ հիմնադրելով եւս ստոյգն)*
6 *b* գտեցես
7 *c* անտօր, *r* անտանօր *փխ* անդանաւր *(abl) (a-ից 1761-ին ընդօրինակուած գրչագրում, որին չնչին շեղումներով յանգում է նաեւ Մ. Էմինի հրատարակութեան բնագիրը, Ղունկիանոս գիտնաւոր գրիչը դարձրել է՝ աստանօր, որում ականատես լեալ. վերնագրի վերջին հատուածը վերցրել ենք քառակուսի փակագծի մէջ՝ համարելով, որ այն, ամենայն հաւանականութեամբ, Ժ դարի պատմիչի յաւելումն է իր ձեռքի տակ եղած աղբիւրի վերտառութեան բնագրին:*
8 *c* գրկու, *l* գիրկս *r* գիրկ ու *փխ* գիրկ եւ *(ab)*
9 *acr* գմբէթէն *փխ* գմբեթէն *(bl)*
10 *cr* սրբոյ Փրկչին մերոյ *(abl)*
11 *ac* գմբէթաձեւ *փխ* գմբեթաձեւ *(blr)*
12 *bcr* եկեղեցոյն
13 *a* ի սպունգն *(bclr)*
14 *l* ոսկեաւ *փխ* ոսկով *(abcr)*

15 *bclr* Կաթուղիկէ *փխ* Կաթողիկէ *(a)*
16 *Գուցէ վերականգնելի է՝* ի *փխ* է:
17 *bcr* վերեւ *փխ* վեր *(al)*
18 *bclr չիք* ի *(a)*
19 *bcr* Գողգոթային *փխ* Գողգոթայի *(al)*
20 *bclr* եկեղեցի *փխ* եկեղեցին *(a)*
21 *b չիք* էր
22 *a չիք* ի *(bclr)*
23 *bcr* Ադամա
24 *bclr* գերեզմանն *փխ* գերեզման *(a)*
25 *a* սեղանոյ *փխ* սեղան *(bclr)*
26 *a* Սիօն, *bl* Սիօնի *փխ* Սիոնի *(cr)*
27 *a չիք* ի *(bclr)*
28 *cr* ո՛չ է *փխ* չէ *(abl)*
29 *l* վերնատնովք
30 *acr* փայտեա *փխ* փայտեայ *(bl)*
31 *cr* կա
32 *c չիք* ի կախ
33 *cr* այն, որ, *bl* զոր *փխ* որ *(a)*
34 *abcr* եկեղեցոյն *փխ* եկեղեցւոյն *(l)*

գմբեթ[2], յորում նկարեալ է զընթրեացն խորհուրդ Փրկչին[3], յորում սեղանն[4] խորհրդոյ: Եւ պատարագ մատչի եւ[5] ի վերնայարկն Սիոնի[6]:

Եւ վերնատունն[7] մի լինի եւ Սուրբն Սիոնի[8] ընդ աջմէ խորանին[9] Պիղատոսի, որ Կապպադովկիա[10] անուանի, եւ վէմն, որի վերայ կայր Փրկիչն առաջի[11] Պիղատոսի, յորոյ[12] ոտից տեղն[13] երեւի ցարդ եւս, եւ աւազանն ներքոյ նորին, ուր զաշակերտացն լուաց զոտս[14], եւ յահեկէ Սիոնի[15] բանան[16], ուր զՏէրն Քրիստոս[17] արգելին: Անդ սեղան է, եւ պատարագ մատչի: Եւ յայնմ տեղւոջ[18], ուր զՍուրբ Կուսին դագաղն[19] կալաւ Հրէայն արտաքոյ[20] քաղաքին՝ չտալ թաղել՝ գմբեթ[21] կապեալ ի չորից սեանց եւ սեանցն պղնձի խաչ[22] զգեցուցեալ, որ[23] են մարմարիոնք: Եւ անդի[24] ցվայր՝ երկուհարիւր եւ[25] յիսուն քարեայ[26] աստիճանք[27], մինչեւ ցսուրբ գերեզման Կուսին, որ ի ձորն Գեթսեմանի[28]: Եւ անդի[29] մինչեւ ի լեառն Ձիթենեաց, ուստի[30] վերացաւ Քրիստոս՝ ութ հարիւր աստիճանք[31]:

Իսկ ի տեղւոջն[32] Համբարձմանն՝ ըստ Յարութեան եկեղեցւոյն[33] ձեւոյ գեղեցկահիւս[34] գմբեթաձեւ[35] շինուածք՝ հարիւր կանգուն յերկայնն[36] եւ հարիւր՝ ի լայնն: Անդի[37] երեւի Յորդանան գետ եւ Հովր լեառնն[38] եւ բովանդակ այլ[39] գաւառքն:

Իսկ Բեթղեհէմ[40] հեռագոյն ի Յարութենէն երկու հարիւր եւ[41] քսան հրասախ[42], յարեւմտից կողմանէ: Զոփ մեծութեան եկեղեցւոյն[43] երկու հարիւր կանգուն յերկայնն[44] եւ հարիւր[45] ի լայնն[46], իննսուն սեամբք մարմարիոնովք, քա-

1 *ac* փայտեա *փխ* փայտեայ *(blr)*
2 *a* գմբէթ, *bclr* գումբէթ *փխ* գմբեթ *(վերականգնում ըստ նախորդների)*
3 *cr* Փրկիչն *փխ* Փրկչին *(abl)*
4 *a* է սեղան *փխ* սեղանն *(bclr)*
5 *a չիք* եւ *(bclr)*
6 *al* Սիօնի *փխ* Սիոնի *(bcr)*
7 *b* վերնատուն
8 *l* Սիօնի *փխ* Սիոնի *(abcr)*
9 *clr* խորանն *փխ* խորանին *(ab)*
10 *b* Կապպպաթան, *l* Կապպպաթայ *փխ* Կապպպաթա *(acr)*
11 *cr* յառաջի *փխ* առաջի *(abl)*
12 *a* յոր *փխ* յորոյ *(bclr)*
13 *bl* տեղս *փխ* տեղն *(acr)*
14 *a* զոտսն *փխ* զոտս *(bclr)*
15 *l* Սիօնի
16 *abc* բանդն *փխ* բանտն *(lr)*
17 *a* զՔրիստոս *փխ* զՏէրն Քրիստոս *(bclr)*
18 *br* տեղոջ, *c* տեղօջ *փխ* տեղւոջ *(al)*
19 *l* դագաղն
20 *a* Հրեայն արտաքին *փխ* Հրէայն արտաքոյ *(bclr)*
21 *abclr* գումբէթ *փխ* գմբեթ *(վերականգնում ըստ նախորդների)*
22 *b* խաչս
23 *l* որք

24 *l* անտի
25 *bclr չիք* եւ *(a)*
26 *abcr* քարեա *փխ* քարեայ *(l)*
27 *b* աշտիճանք
28 *blr* Գեթսամանի *փխ* Գեթսեմանի *(ac)*
29 *clr* անտի *փխ* անդի *(ab)*
30 *c* ուստի
31 *bcr* աշտիճանք *փխ* աստիճանք *(al)*
32 *bcr* տեղոջ *փխ* տեղւոջն *(al)*
33 *a* եկեղեցոյ, *bcr* եկեղեցոյն *փխ* եկեղեցւոյն *(l)*
34 *bcr* գեղեցկապէս *փխ* գեղեցկահիւս *(al)*
35 *acr* գումբէթաձեւ, *b* գումբեթաձեւ, *l* գմբէթաձեւ *փխ* գմբեթաձեւ *(վերականգնում)*
36 *a* երկայն *փխ* յերկայնն *(bclr)*
37 *cl* Անտի *փխ* Անդի *(abr)*
38 *a* լեառն *փխ* լեառնն *(bclr)*
39 *a* բազում *փխ* բովանդակ այլ *(bclr)*
40 *b* Բեթղէէմ, *c* Բեթղէեմ, *r* Բեթղեհեմ *փխ* Բեթղեհէմ *(al)*
41 *bclr չիք* եւ *(a)*
42 *c* հրասխ, *l* խրասխ *փխ* հրասախ *(abr)*
43 *bcr* եկեղեցոյն *փխ* եկեղեցւոյն *(al)*
44 *a* երկայնութիւն, *b* յերկայն, *cr* երկայն *փխ* յերկայնն *(l)*
45 *cr չիք* եւ հարիւր *(abl)*
46 *cr* լայն *փխ* լայնն *(abl)*

բեայ[1] կամարակապաւք: Եւ ի նմանէ[2] է կրկին՝ յայրն[3], զոր Աբրահամ գնեաց ի կալուածս շիրմացն[4]: Եւ ներքոյ բեմին՝ սուրբ այրն[5] եւ մսուրն, ուր՝ սեղան, եւ պատարագ մատչի: Եւ յաջմէ եկեղեցւոյն[6] մատուռն, յորում մանկանց՝ սպանելոցն ի Հերովդէէ[7] նշխարք պահին:

Եւ անդի[8] յարեւելից կուսէ ըստ Յորդանանու կողմանէ երեք ասպարիսաւք հեռի ի Բեթղեհէմէ[9] հովանոցն, ուր՝ երկու եկեղեցի, եւ պատարագ մատչի:

Եւ Յորդանան գետ հինգ[10] հրասախ[11] հեռի է յերուսաղէմէ, յարեւելից կուսէ, ուր Փրկիչն մկրտեցաւ: Յորում եկեղեցի սագաշէն խաչանման յարմարեալ, ութսուն[12] կանգուն երկայն[13], ութսուն՝ լայն, երեք սեղան խորհրդոյ, եւ պատարագ մատչի:

Եւ լեառն Զիթենեաց Երուսաղէմի յարեւելից կուսէ լինի:

1 *abcr* քարեա *փխ* քարեայ *(l)*
2 *bclr* նմա *փխ* նմանէ *(a)*
3 *bl* այրն *փխ* յայրն *(acr)*
4 *ac* շիրմանցն *փխ* շիրմացն *(blr)*
5 *cr* յայրն *փխ* այրն *(abl)*
6 *bcr* եկեղեցոյն *փխ* եկեղեցւոյն *(al)*
7 *ab* Հերովդէ, *cr* Հերոդէէ *փխ* Հերովդէէ *(l)*
8 *l* անտի
9 *bclr* Բեթղահէմէ *փխ* Բեթղեհէմէ *(a)*
10 *a* եաւթն *փխ* հինգ *(bclr)*
11 *l* խրասխ
12 *b* Ջ
13 *bl* յերկայն *փխ* երկայն *(acr)*

ԺԸ. ԴԱՐԻ ԱՌՈՒԾԱԽԻ ՎԱՒԵՐԱԳՐԵՐ ԼՕՌԷԻՑ

Պարոյր Մուրադեան

«Յիշատակարան Սանահնոյ վանից (Սանահնի քեօթուկը)» գրքի առաջաբանում (Ս. Էջմիածին, 2007) առիթ ունեցել ենք խօսելու միջնադարեան տարաբնոյթ վաւերագրերի ուսումնասիրութեան ու հրատարակութեան, ինչպէս նաեւ՝ այդ մարզում կատարելիք համակարգուած ու ծրագրեալ աշխատանքի կարեւորութեան մասին: Սակայն այդ նիւթերի ժամանակագրական կամ թեմատիկ դիւանների կազմումը մեզանում երկու կարգի նախապատրաստութիւն է պահանջում. նախ պէտք է կազմել մօտաւոր ցանկը այն հնադարանների ու հաւաքածոների, որոնք հայագիտութեանը զբաղեցնող համապատասխան նիւթեր են բովանդակում: Սա խիստ տեւական եւ ծախսատար պրպտում ենթադրող գործ է, քանի որ կապուած է հայաշխարհի տարբեր կենտրոններում այդպիսիք գտնելու հնարաւորութեան եւ տեղում լինելու անհրաժեշտութեան հետ: Եւ ապա՝ մեզանում տակաւին մշակուած չեն վաւերագրագիտութեան (դիպլոմատիկայի) հետ առնչուող տեսական հարցերը՝ բնագրի եւ պատճէնի նոյնականութեան ստուգանը, վաւերականութիւնը հաւաստող բովանդակային ու արտաքին նշանները, արտօնողների ու ստացողների ինքնութեան խնդիրը, վաւերագրում առկայ իրաւական նորմերի քաղաքական ու աշխարհագրական ճանաչումը, լեզուական ու հնագրական-գրչական նկարագիրը եւ վերջապէս՝ իսկականի եւ կեղծ յօրինուածքի տարբերակումը:

Հրապարակի վրայ եղած կալուածագրերի, կոնդակների, շնորհագրերի, արտօնագրերի, միջնորդագրերի, ստացականների, հրովարտակների ու այլապան թղթերի հրատարակութիւնները, անկախ նրանց քանակական նկարագրից, բնագիր թէ պատճէն լինելուց, աղբիւրագիտական որեւէ ընդհանրական սկզբունքի կիրառմամբ չեն կատարուած, ուստի յաճախ նրանց գործածութիւնն իբրեւ աղբիւր երկբայելի է: Դոյզն-ինչ չնսեմացնելով հայկական վաւերագիր աղբիւրներ հրատարակած մեր վաստակաւորների ունեցած աւանդը (ի թիւ որոց են Գ. Ադանեանցը, Կ. Կոստանեանցը, Կ. Եղեանը, Ա. Ալպոյաճեանը, Հ. Յ. Տաշեանը, Հ. Ոսկեանը, Հ. Պէրպէրեանը, Ա. Յովհաննիսեանը, Մկրտ. Ներսիսեանը, Յ. Աբրահամեանը, Ա. Անտոնեանը, Ս. Բեհբուդեանը եւ բազում այլք), պիտի խոստովանել, որ մենք նոյնպէս, ինչպէս վրացի գիտնականներն այդ կատարեցին, կարիք ունենք ելման կէտ վերադառնալու եւ ի նորոյ համակարգուած նախնական աշխատանք կատարելու, որն է մատենագիտութիւնների, անձնանունների, ժամանակագրական, աշխարհագրական ցանկերի կազմումը: Ընդ որում, այդ չի նշանակում, թէ կոչ ենք անում ձեռնպահ*

* Ակադ. Կ. Կեկելիձէի անուան Ձեռագրերի ինստիտուտը կազմատրելիս պրոֆ. Ի. Աբուլաձէն 1959 թ. ծրագրեց վրացերէն վաւերագրերն ուսումնասիրող եւ հրատարակութեան պատրաստող աշխատակազմ, որը գոյութիւն ունեցող բոլոր հաւաքածոների (այդ թւում՝ Երեւանի Մատենադարանի) նիւթերի հիմամբ ձեռնամուխ եղաւ *«Անձանց ծանօթագրուած բառարան՝ ըստ XI-XVII դարերի վրաց պատմական վաւերագրերի»* ստեղծելուն: Վերջին երկու տասնամեակում լոյս է տեսել այդ բառարանի չորս հատոր («პირთა ანოტირებული ლექსიკონი. XI-XVII სს. ქართული ისტორიული საბუთების მიხედვით», ტ. I, თბ., 1991, ტ. II, 1993, ტ. III, 2004, ტ. IV, 2007):

ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶՕՐԱՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆՑ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ (Թ.-ԺԱ. ԴԱՐԵՐ)

Կարինէ Ոսկանեան

Բագրատունեաց շրջանի հայոց բանակի գլխաւոր զօրատեսակներն էին հեծելազօրը եւ հետեւակը: Հայոց բանակի մարտավարութիւնը հիմնուած էր գլխաւորապէս այս զօրատեսակների համագործակցութեան վրայ:

Յովհաննէս Դրասխանակերտցին Սմբատ Ա-ի (890-914) հրամանով հաւաքուած զօրքի կազմում տարբերակում է թեթեւազէն եւ ծանրազէն զինուորներին: Թեթեւազէններին նա անուանում է կորովի աղեղնաւորներ. «Այլ եւ ի հիւսիսականաց անտի ոչ դուն ինչ եկեալք ի կոչօնս արքայի՝ աղեղնաւորք կորովեաց եւ տիգաւորք նիզակաց եւ վառեալք ի զէնս եւ ի զարդս»[1]: Հասան Արծրունու զօրքի նկարագրութեան մէջ եւս առանձնացուում են «աղեղնաւոր»-ները[2]: Թեթեւազէն հետեւակի մաս պէտք է կազմէին նաեւ պարսատիկով զինուածները: Յովհաննէս Դրասխանակերտցին Կապոյտ բերդի պաշտպանների մէջ նշում է պարսատիկաւորներին. «եւ զնետաձիգս ի լայնալիճ աղեղանց եւ զքարինս ի պարսատկաց եւ յաւետ իմն եւ անհնարին խողխողումն ի վերայ մարտիկ զօրացն հասուցանէին»[3]:

Բիւզանդական բանակում հետեւակը բաժանւում էր ծանրազէն եւ թեթեւազէն զինուորների՝ կախուած զինատեսակներից: Թեթեւազէն հետեւակը, որը զինուած էր նետ ու աղեղով եւ վարժուած էր նետաձգութեան արուեստի մէջ[4]: Նիզակը կազմում էր ծանր հետեւակի հիմնական զինատեսակը: Հետեւակի հիմնական միաւորը հազարեակն էր, որը բաղկացած էր 650 ծանրազէն եւ 350 թեթեւազէն զինուորներից: Արաբական բանակում ծանր հետեւակը զինուած էր նիզակներով, սրերով եւ վահաններով[5]:

Աշոտ Բ-ի (914-928) զօրքի կազմում Յովհաննէս Դրասխանակերտցին, նետաձիգներից բացի, յիշատակում է նիզակաւորներին եւ սրով/սուսերով զինուածներին. «Զոմանս ի սուր սուսերի եւ ի սլաքս նետից եւ ի տէգս նիզակաց հաշեալ մաշեալ սատակէին»[6]: Հետեւազօրի կարեւորութիւնը շեշտում է նաեւ Թովմա Արծրունին. «Տեղեկանայր եւ զայն եւս ըստ իւրաքանչիւր գնդից, ... եւ կամ քանի՛ այնոքիկ, որք վահանաւորք հետեւակաց են, եւ կամ քանի՛ նիզակաւորք, եւ կամ որչա՛փ թիւք աղեղնաւորացն են (ընդգծումն իմն է - Կ. Ո.»[7]: Այսպիսով, հայոց բանակում մշտապէս եղել է ե՛ւ ծանրազէն, ե՛ւ թեթեւազէն հետեւակ զօրք: Իւրաքանչիւրն անկասկած տարբեր մարտավարական խնդիրներ է լուծել ռազմի դաշտում: Արաբական բանակում հետեւակ նետաձիգները գործում էին գլխաւորապէս ցրուած շարքերով: Ռազմական արշաւանքների ընթացքում նրանց մարտական առաջադրանք էր տրւում՝ ծանր հեծելազօրի թեւերում դիրքաւորուած առաջ շարժուել եւ նոյնիսկ հեծելազօրի արագ քայլքին հաւասար գնալ: Մարտակարգում նետաձիգները դիրքաւորւում էին ծանր հետեւակի թիկունքում, որի գլխի վրայով նետերի տարափ էին տեղում յարձակուող հակառակորդի վրայ[8]: Բիւզանդական բանակում նոյնպէս նետաձիգները դիրքաւորւում էին ծանր հետեւակի թիկունքում: Սովորաբար մարտակարգի առաջին չորս շարքերը զբաղեցնում էին ծանր հետեւակայինները, իսկ միւս երեք շարքերը՝ նետաձիգները: Բիւզանդական բանակում այլ մարտավարական դիրքերում նետաձիգները դիրքաւորւում էին ծանր հետեւակի թեւերում[9]: Բիւզանդիայի պատմութեան մէջ շատ ճակատամարտեր սկսուել են ծանր հետեւակի ճակատային գրոհով, որի անվտանգ առաջխաղացումը ապահովում էին հեծեալ նետաձիգների զօրամասերումները[10]:

Հայոց բանակում նետաձիգները տարբեր դերակատարում են ունեցել: Դողսի ճակատամարտում Յովհաննէս Դրասխանակերտցին նշում է թեթեւազէն եւ ծանրազէն զօրքերի համագործակցութիւնը. «Անդ ապա ի քաջ արանց սուսերամերկաց եւ ի լայնալիճ աղեղնաւորաց նետից՝ ահագին ահափետ օրհասք մահու հասուցանէին Իսմայէլեան գնդին»[11]: Գուրգէն Ապուսպելճի մղած ճակատամարտերից մէկում նետաձիգները դիրքաւորւել են առաջին շարքում եւ մինչեւ մօտ տարածութեան վրայ մարտի սկսուելը նետահարել թշնամուն. «եւ վահանաւորքն փակեցին զառաջակողմն ճակատուն եւ կացին ի թիկանց հետեւակազօր նահատակացն»[12]: Թովմա Արծրունու յիշատակած հետեւակ վահանաւորները կազմել են ծանրազէն հետեւակը, որի զինուորները, բացի նիզակներից, զինուած են եղել նաեւ սրերով: Հայոց բանակի ծանրազէն հետեւակի մասին հրաշալի վկայութիւն է Ահմադ ոստիկանին վնասազերծելու հետ կապուած դէպքերի նկարագրութիւնը: Աբաս սպարապետը շրջապատել է արաբ ոստիկանի վրանը՝ հետեւակ գնդի զինուորներով. «Յայնժամ շուրջ կացեալ զվրանաւն մեծ սպարապետին զկազմեալ գնդաւ վահանաւոր եւ նիզակաւոր ամրափակ պնդութեամբ»[13]: Այսպիսով, ծանրազէն հետեւակը սպառազինւում էր նիզակով, սրով եւ վահանով: Հայոց բանակի ծանրազէն հետեւակը աչքի ընկաւ նաեւ Մուսա իբն Զուրարայի եւ Բագարատ Բագրատունու զօրքերի միջեւ ճակատամարտի ժամանակ. «Վահանաւորքն եւ նիզակաւորքն գոչէին, այրուձին այսր անդր վազս առնէին եւ ախոյեանքն յարձակէին, կապարճակիրքն աղեղանցն իւրային»[14]:

Յովհաննէս Դրասխանակերտցին Աշոտ եւ Վասակ Գնթունիների ապստամբութեան մասին խօսելիս նրանց գումարտակի մէջ յիշատակում է նաեւ վաղակաւորներին, որոնք, եւս ամենայն հաւանականութեամբ, կուում էին ծանրազէն հետեւակի կազմում. «Եւ իբրեւ արանց աւելի քան զչորեքհազարաց սուսերամերկաց վահանաւորաց նիզակաւորաց վաղակաւորաց»[15]:

Հայոց բանակում ծանրազէն հետեւակը ճակատամարտերի ընթացքում տարբեր մարտավարական խնդիրներ էր լուծում: Սահակ Սեւադա իշխանի զօրքի դասաւո-

---

1 Յովհաննէս Դրասխանակերտցի, *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 167-168:

2 Նոյն տեղում, էջ 190:

3 Նոյն տեղում, էջ 235:

4 *Byzantine Battle Tactics*, www.mlahanas.de/-Greeks/Medieval/war/ByzantineBattleTactics.html

5 **Е. Разин**, *История военного искусства*, т. II, Москва, 1957, с. 115-116.

6 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 296:

7 Թովմա Արծրունի եւ Անանուն, *Պատմութիւն տանն Արծրունեաց*, աշխատ. Վ. Վարդանեանի, Երեւան, 1985, էջ 198:

8 **Е. Разин**, նշ. աշխ., էջ 116:

9 **В. Колташов**, *Византийская армия IV-XIII веков*, http://byzantion.ru/polemos/ByzArm.html.

10 Byzantine Battle Tactics, www.mlahanas.de-/Greeks/Medieval/war/ByzantineBattleTactics.html

11 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 169:

12 Նոյն տեղում, էջ 306:

13 Նոյն տեղում, էջ 344:

14 Նոյն տեղում, էջ 174:

15 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 296:

րութիւնը հետեւեալն էր. առջեւում թեթեւազէն հեծելազօրն էր (անուանուած է «առաջապահք»)[16], այնուհետեւ՝ ծանրազէն հետեւակը, որը վահաններով փակել էր ռազմաճակատի գիծը, իսկ նրա թիկունքում դիրքաւորուած էր ծանրազէն հեծելազօրը. «Հրամայէր հետեւակամարտ գնդին վահանափակ լինել եւ որ տեսութիւն իմն բերէր յինքն որպէս զանպարտելի պարիսպ. եւ ի թիկանց կուսէ նոցա զհեծելազօր գունդն պատրաստէր՝ սպառազինեալս եւ վառեալս ի զէնս եւ ի զարդս եւ առաջապահքն առաջի վահանափակ սպային սրավար երիվարօք խաղացեալ՝ յայսկոյս յայնկոյս երթային գային»[17]: Ծանրազէն հետեւակի գլխաւոր խնդիրը մարտակարգի առջեւը փակելն էր. «Եւ վահանաւորքն փակեցին զառաջակողմն ճակատուն»[18]: Վահանաւորներն անխոցելի էին դարձնում ճակատը, իսկ հետեւակ զինուորներից յետոյ դասաւորւում էին հեծեալ մարտիկները. «...եւ ի թիկանց կուսէ նոցա զհեծելազօր գունդն պատրաստէր»[19]:

Բիւզանդական բանակում ամենատարածուած զօրաշարուածքն էր՝ հետեւակը կենտրոնում, հեծելազօրը երկու թեւերում: Հայոց բանակում եւս կիրառւում էր այս զօրաշարուածքը: Այսպէս, Արեան լճի ճակատամարտում հայոց զօրքի մարտակարգի կենտրոնում հետեւակն էր, երկու թեւերում՝ հեծելազօրը[20]: Որդոքի ճակատամարտում նոյնպէս հետեւակը դիրքաւորւում է կենտրոնում[21]: Ե՛ւ բիւզանդական, ե՛ւ հայկական բանակներում մարտը սկսում էր ծանր հետեւակը, աւարտում էր հեծելազօրը: Թէեւ բիւզանդացիները կատարելագործել էին հետեւակի մարտավարական եղանակները, այնուհանդերձ վճռորոշ դերը վերապահւում էր հեծելազօրին[22]: Հայ պատմիչները, այդ թւում՝ Թովմա Արծրունին, վճռորոշ են համարում հեծելազօրի դերը: Հեծեալների յախուռն եւ սրընթաց յարձակումը, թշնամուն շրջապատելը եւ հետեւակի թիկունքը պաշտպանելը՝ յաղթանակի հասնելու նախապայմաններից էին: Թովմա Արծրունին ճակատամարտերը նկարագրելիս կենտրոնանում է հեծելազօրի գործողութիւնների վրայ, ինչն ինքնին վկայում է հեծելազօրի կարեւոր դերի մասին: Երբ զօրատեսակների համագործակցութիւնը չէր կայանում, պարտութիւնն անխուսափելի էր: Այդպէս եղաւ Խոզաղբերքի ճակատամարտում, երբ հեծելազօրը դիմեց փախուստի, իսկ հետեւակը մնաց անպաշտպան եւ գրեթէ ամբողջութեամբ ոչնչացուեց[23]: Նոյնը տեսնում ենք Թուղխի ճակատամարտում, որտեղ հեծելազօրի փախուստը յանգեցրեց հետեւակի շրջապատմանը եւ ահռելի կորուստների[24]:

Փոխարէնը հեծելազօրի կարեւորութիւնը կտրուկ նուազում էր դժուարամատչելի տեղանքի եւ եղանակային պայմանների պատճառով: Ձմռանը պատերազմ վարելիս հարկադրուած էին սահմանափակուել միայն հետիոտն ռազմիկներից բաղկացած զօրամասերով: Այսպէս, Արծրունեաց իշխան Հասանը Աշոտ Արծրունու դէմ ձմռանը պատերազմելիս անբարենպաստ եղանակի պատճառով հաւաքագրում է միայն հետեւակ զինուորներ.

16 Արաբական բանակում զօրքը բաժանւում էր առաջապահ, վերջապահ գնդերի եւ գլխաւոր ուժերի: Առաջապահ զօրամասը բաղկացած էին թեթեւազէն հեծելազօրից: Սահակ իշխանի զօրքի դասաւորութեան մէջ եւս տեսնում ենք նոյն պատկերը:

17 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 312:

18 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 306:

19 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 312:

20 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 230:

21 Նոյն տեղում, էջ 306:

22 *Infantry tactics and strategies*, www.mlahanas.de-/Greeks/Medieval/war/ByzantineBattleTactics.html

23 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 304:

24 Նոյն տեղում, էջ 368:

«Քանզի աւուրք ձմերանի էին, յորում ոչ գոյր հնար ձիական ասպարիսօք կատարել զհանդէս պատերազմաց»[25]: Համբոյրազան աւանի մարտում Վասպուրականի զօրքի պարտութեան պատճառներից մէկը ձմռան անբարենպաստ եղանակն էր, ինչի հետեւանքով ձիերը ձեան մէջ դժուարութեամբ էին տեղաշարժւում. «Բայց քանզի խոնջեալ երիվարացն ի յերկայնագոյն ընթացից եւ վասն թանձրամած ձեանն կուտակմանց պակասեալ ուժոյ երիվարացն՝ եւ թշնամիքն հանդստեամբ ելեալ ի վերայ նոցա»[26]: Բազմաթիւ ճակատամարտեր հայոց բանակում սկսւում էին հեծելազօրի գրոհով: Քանի որ բանակի հիմքը կազմում էր ազատների դասը, իսկ նրանք, ինչպէս յայտնի է, հեծեալներ էին, ապա շատ դէպքերում մարտերը մղւում էին միայն հեծելազօրի մասնակցութեամբ: Դրա օրինակն է Ծումբի ճակատամարտը[27]: Արճուճքի ճակատամարտում, որտեղ Աշոտ Արծրունու զօրքը ազատներից էր կազմուած, ականատես ենք լինում միայն հեծելազօրի գործողութիւններին[28]: Հայկական հեծելազօրը մարտի դաշտում տարբեր կերպ էր դիրքաւորւում: Արեան լճի ճակատամարտում հեծեալները իրար շատ մօտ են կանգնում եւ յարձակւում են առանց շարքերը խախտելու. «Եւ զօրացն քաջալերեալ ընթացան յիւրաքանչիւր զէնսն, եւ հեծեալ յընտիրս երիվարացն՝ կացին ի հանդիպոջ եւ հանդիսացան գումարեցան ի մի վայր եւ պնդեցան կարգեցան մածեան հոլովեցան յինքեանս, եւ եղեն իբրեւ զմի այր կամ թէ իբրեւ զվէմ մի բլրաձեւ, արձանացան կարծրացան պնդութեամբ՝ անմատոյց լինել ի նոսա զօրութիւն երկաթի»[29]: Թովմա Արծրունու «զվէմ մի բլրաձեւ» բառերից երեւում է, որ հեծելազօրը դասաւորուել է սեպաձեւ: Հեծելազօրի գրոհով ճակատամարտը սկսելու եւ սեպաձեւ այն դասաւորելու մարտավարութիւնը կիրառել են նաեւ բիւզանդական բանակում, երբ ստիպուած են եղել պայքարել ուժեղ հետեւակի դէմ: Սովորաբար 400 զինուորներին դասաւորում էին 8 կամ 10 ընդարձակ շարքերում: Առաջին երեք շարքերը զինուած էին նիզակներով եւ աղեղներով, մնացածները՝ նիզակներով եւ վահաններով: Առաջին շարքը բաղկացած էր 25 զինուորից, երկրորդը՝ 30, երրորդը՝ 35, մնացածը՝ 40, 50, 60 եւ այլն[30]: Հեծելազօրի յարձակումով ճակատամարտը սկսելու մարտավարութիւնը յաջողութիւն է բերում Արեան լճի ճակատամարտում: Հեծելազօրը կարողանում է ճեղքել արաբական զօրքի ճակատը. «Եւ դիմեցին խուռն յանդուգն յարձակմամբ եւ բախեցին զգունդն եւ պատռեցին զռազմն եւ դարձուցին զայլազգիսն»[31]: Զինուորների խիտ շարքերով դասաւորուած մարտակարգ է ընտրել նաեւ Արցախի իշխան Եսայի Աբու Մուսէն արաբական զօրքի դէմ ճակատամարտերի ժամանակ. «Եւ եղեւ իբրեւ զբլուր մի մեծ երկաթի, կամ զվէմ անդամանդեայ. եւ խուռն բոլորեալ գունդն կային մածեալ իբրեւ զմի այր»[32]: Ուշագրաւ է յատկապէս ճակատամարտերից մէկի ժամանակ Եսայի իշխանի ընտրած զօրաշարուածքը, որը նման էր խաչի, այսինքն՝ զօրքը բաժանուած էր չորս մասի, եւ յարձակումը չորս ուղղութիւններով է իրականացւում: Արաբները, մարտակարգի թեւերը առաջ բերելով, շրջապատել էին հայոց զօրքը, սակայն հայերը չորս կողմով

25 Նոյն տեղում, էջ 426:

26 Նոյն տեղում, էջ 372:

27 **Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ**, *Պատմութիւն տիեզերական*, հրատ.՝ Ստ. Մալխասեանց, Սանկտ Պետերբուրգ, 1885, էջ 272-273:

28 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 178:

29 Նոյն տեղում, էջ 230:

30 www.mlahanas.de/Greeks/Medieval/war/ByzantineBattle Tactics.html

31 **Թովմա Արծրունի եւ Անանուն**, էջ 232:

32 Նոյն տեղում, էջ 284-286:

կռուելով, կարողանում են ճեղքել արաբ զինուորների ճակատային դասաւորութիւնը եւ նրանց իջեցնել լեռան վրայից, ինչը եւ ապահովում է յաղթանակը. «Եւ դիմեցին ի մէջ նոցա ի չորս առաջս, ըստ նմանութեան տեառնանման խաչին, եւ բախեցին զճակատն եւ պատառեցին զռազմն եւ դարձուցին ընդ զառ ի վայրն եւ իջուցին ի լեռնէ անտի, եւ հարին ի հարուածս մեծամեծս»[33]:

Բացի կանոնաւոր մարտակարգով մղուող մարտերից, հեծելազօրը նաեւ անկանոն զօրաշարուածքով էր մարտեր մղում: Յայտնի է, որ եւրոպական ասպետների բախումները ռազմի դաշտում բազմապատկուած մենամարտեր էին յիշեցնում: Ռազմական զօրաշարք, որպէս այդպիսին, չկար: Հակառակորդին մօտենալու համար սովորաբար շարասիւն էին կազմում, որը խախտւում էր անհատական մարտեր մղելու համար[34]: Հայոց բանակում, կախուած հանգամանքներից, երբեմն միայն նման եղանակով են մարտեր մղել: Ծումբի ճակատամարտում մարտակարգ չի կազմուել. «Եւ ոչ ըստ օրինաց պատերազմի ճակատ յօրինէին, այլ իւրաքանչիւրքն ըստ տոհմից եւ աւագութեան գնդից դիմէին, առիւծաբար մռնչելով՝ յանտառացեալ բազմութիւն բանակին Պարսից»[35]: Գեւորգ իշխանի եւ արաբ զօրավար Բեշիրի զօրքերի միջեւ կռիւն աւելի նման էր մենամարտի, քան կանոնաւոր ճակատամարտի. «Եւ ապա միամարտեալ ընդ սպայակոյտ զօրուն՝ նախ կարթակոտոր զերիվար Բշրայն առնէր նրանաւ սրոյն եւ մինչ զի հազիւ յայլ ձի աշտանակեալ փախչէր»[36]:

Հեծելազօրի դերի կարեւորութեան մասին է վկայում այն փաստը, որ Բագրատունեաց շրջանում իր գոյութիւնը շարունակում էր պահպանել նաեւ հասարակ բնակչութիւնից հաւաքագրուած հեծելազօրը[37]: Բուղայի արշաւանքի ժամանակ յիշատակւում է Տարօն գաւառի գիւղացիներից կազմուած հեծեալ գունդը. «Իսկ զգաւառին հեծելագունդն զգռեհիկս»[38]: Հայկական հեծելազօրը վարժուած էր մօտիկ տարածութեան վրայ մարտեր մղելու մէջ: Հայ հեծեալի հիմնական զինատեսակներն էին սուրը, կարող-հատող միւս զինատեսակները, նիզակը:

Թ. դարից արաբական բանակում մեծ դեր են սկսում խաղալ թիւրքական ծագում ունեցող վարձկանները, որոնք հեծեալ նետաձիգներ էին: Բիւզանդական բանակում հեծեալ նետաձիգները կարեւոր դեր են խաղացել վաղ միջնադարում, յատկապէս՝ Զ դարում: Յաջորդ դարերում, սակայն, հեծեալ նետաձիգների դերակատարութիւնը մարտադաշտում նուազել է: Բիւզանդական բանակը չէր կարողանում պատշաճ դիմադրութիւն ցոյց տալ նետաձգութեան մէջ հմտացած քոչուորական ցեղերին՝ պեչենեգներին եւ սելջուկ-թիւրքերին[39]: Բիւզանդական հեծեալները վարժ էին մօտիկ տարածութիւնից սրով կամ նիզակով կռուելու մէջ, իսկ քոչուորները հեռուից նետերի տարափ տեղալով մեծ կորուստներ էին պատճառում նրանց: Սելջուկների մարտավարական առաւելութիւնը երեւում է Մանազկերտի ճակատամարտում, որը ճանապարհ բացեց նրանց առջեւ՝ Փոքր Ասիան կարճ ժամանակամիջոցում նուաճելու համար: Պէտք է նշել, որ այս շրջանում բիւզանդական հեծելազօրը զինուած չէր նետ ու աղեղով[40]: ԺԱ. դարի վերջին, գնահատելով նետաձգութեան դերը, բիւզանդացիները սկսեցին ուշադրութիւն դարձնել դրա զարգացմանը: Մանուէլ Ա. Կոմնենոսի (1143-1180) կառավարման ժամանակ նետ ու աղեղը դառնում է բիւզանդական բանակի հիմնական զինատեսակներից մէկը: Եւրոպական ասպետների համար եւս նետ ու աղեղը պատուաւոր զինատեսակ չէր համարւում: Այդ նշանակում է, որ սելջուկների կողմից նետ ու աղեղը որպէս գլխաւոր զինատեսակ օգտագործելը նրանց մարտավարական առաւելութիւն էր տալիս: Հայկական բանակում հեծեալ նետաձիգների մասին տեղեկութիւններ չունենք, հետեւաբար, հեծեալ նետաձիգները մարտի դաշտում մեծ դերակատարում չեն ունեցել: Մինչեւ Մանազկերտի ճակատամարտը սելջուկների մարտավարական այդ առաւելութիւնը եւ հայկական հեծելազօրի անպատրաստութիւնը երեւում է Վասպուրականի զօրքի եւ սելջուկների միջեւ ճակատամարտի նկարագրութիւնից: Մատթէոս Ուռհայեցին նշում է, որ հայկական հեծելազօրը պատրաստ չէր սելջուկների հեծեալ աղեղնաւորների դէմ կռուելուն. «Յայնժամ զօրքն Հայոց չէին սովոր պատրաստ լինիլ ընդդէմ նետից». եւ քաջաբար ի վերայ այլազգեացն յարձակեցան եւ առ հասարակ մերկացուցին զսուսերն իւրեանց ի պատենից եւ արիաբար ի պատերազմ ընթանային արիական գունդն Հայոց եւ զբազումս յայլազգեացն սատակէին: Իսկ այլազգիքն նետաձգութեամբ զբազումս ի զօրացն Հայոց վիրաւորէին խոցելով»[41]: Սելջուկ-թիւրքերի արշաւանքներից յետոյ ընկած ժամանակահատուածում՝ Զաքարեանների իշխանութեան եւ մոնղոլական շրջանում, հայոց զօրքում եւս հեծեալ նետաձիգները տարածուած զօրատեսակ են դառնում: Այդ մասին են վկայում նետ ու աղեղով զինուած հեծեալների պատկերներով բազմաթիւ տապանաքարերը եւ քանդակները[42]:

Հայոց բանակում կիրառւում էին մարտավարութեան տարբեր եղանակներ: Գործադրւում էր յանկարծակի յարձակումների, հակառակորդին անակնկալի բերելու մարտավարութիւնը: Այն յաջողութեամբ կիրառում է Աշոտ Բ-ն՝ իր փոքրաթիւ ուժերով արաբների դէմ յաղթանակներ տանելով: Այս մարտավարութեան յաջողութեան համար անհրաժեշտ էր զօրքի բարոյահոգեբանական կայուն վիճակ եւ մարտնչելու պատրաստակամութիւն: Յանկարծակի յարձակման մարտավարութիւնը յաջողութիւն բերեց յատկապէս Սեւանի ճակատամարտում, երբ փոքրաթիւ, բայց մարտունակ զօրքով Աշոտ Բ-ն կարողացաւ յաղթանակ տանել[43]: Սիւնիքում Իւսուֆի արշաւանքի շրջանում տեղական իշխանները խուսափում են բաց ճակատամարտերից եւ ընտրում են թշնամուն ան-

33 Նոյն տեղում, էջ 286:

34 **А. Свечин**, *Эволюция военного искусства*, т. I, militera.lib.ru/science/ svechin2a/index.html

35 **Ստեփանոս Տարօնեցի Ասողիկ**, էջ 73:

36 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 356-357:

37 Գիւղացիներից հաւաքագրուող հեծելազօրը վաղ միջնադարում յայտնի էր «ռամիկ այրուձի» անուամբ: Այն կազմաւորւում էր թագաւորի կամ նախարարների հայեցողութեամբ: Նրա դերը մեծանում է յատկապէս մարզպանական ժամանակաշրջանում, երբ յատուկ կարգ է սահմանւում. գիւղական համայնքի իւրաքանչիւր իններորդ երդը պէտք է տար մէկ հեծեալ. տե՛ս **Յ. Մանանդեան**, *Քննական տեսութիւն հայ ժողովրդի պատմութեան*, հտ. Բ, Ա մաս, էջ 347. **Ս. Երեմեան**, *Հայաստանի սոցիալ-տնտեսական յարաբերութիւնները III-IV դարերում: Ֆէոդալականացող Հայաստանի դասակարգային եւ պետական կառուցուածքը*, «Հայ ժողովրդի պատմութիւն», հտ. II (ՀՀ ԳԱԱ հրատ.), Երեւան, 1984, էջ 128:

38 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 119:

39 **W. Kaegi**, *Army, Society and Religion in Byzantium*, London, 1982, p. 103-107.

40 Նոյն տեղում, էջ 106:

41 **Մատթէոս Ուռհայեցի**, *Ժամանակագրութիւն*, Վաղարշապատ, 1898, էջ 47-48:

42 *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ III, կազմեց Ս. Բարխուդարեանը, Երեւան, 1967, էջ 31. *Դիւան հայ վիմագրութեան*, պրակ IV, կազմեց Ս. Բարխուդարեանը, Երեւան, 1973, էջ 322, 376, 379. **Գ. Յովսէփեան**, *Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մէջ*, Անթիլիաս, 1969, էջ 24, 28:

43 **Յովհաննէս Դրասխանակերտցի**, էջ 356:

սպասելի յարձակումներով արիւնաքամ անելու մարտավարութիւնը: Նրանք ամրանում են խոր ձորերում եւ քարանձաւային ամրութիւններում եւ բազմաթիւ յանկարծակի յարձակումներով խուճապ են առաջացնում թշնամու շարքերում. «Որք եւ ամրացեալք իսկ ի խոխոմս խորոցն ձորոց եւ յամուրս քարանձաւաց՝ բազում արշաւասոյր հէնս ի վերայ թշնամեացն հասուցանէին եւ գումարտակս սփռեալ՝ արեանց ճապաղիս հեղուին»[44]: Վասպուրականում Գագիկ եւ Գուրգէն Արծրունիները բազմաթիւ յարձակումներ են գործում Ատրպատականի կողմից ներխուժած արաբ հրոսակների վրայ. «Եւ այսպէս առնաբար քաջութիւնս յանձին իւրեանց տպաւորեալ հանդերձ սպասելաբ եւ պայազատ զնդիւն՝ զբազումս ի Հագարացւոցն թաւալգլոր խաղացուցանէին: Ոչ միանգամ՝ այլ եւ բազում անգամ ստէպ ստէպ զայս արարեալ»[45]: Հայոց բանակում կիրառուել է նաեւ գիշերային յարձակումների մարտավարութիւնը: Այն յատկապէս կիրառում էին Վասպուրականի զօրահրամանատարները: Արճուճքի ճակատամարտում Աշոտ Արծրունին զօրքը գիշերն է դասաւորում, իսկ մարտը սկսում է վաղ առաւօտեան[46]: Գիշերային մարտեր մղելու տաղանդ ունէր յատկապէս Գուրգէն Ապուսալճը. «Իսկ Գուրգէն ընթացեալ զհետ հանդիսի պատերազմող նահատակութեանցն, անդուլ լինելով զցայգ եւ զցերեկ հանդերձ որ ընդ նմա միաբանեալ ազատագունդ զօրացն, ...տապալէր զզօրութիւն նոցա սրով եւ աղեղամբ, ի փայլիւն սուսերի եւ նիզակի եւ ի գիշերամարտ նահատակութեանց»[47]: Գիշերային մարտավարութիւնը յաջողութեամբ կիրառում է նաեւ Գագիկ Արծրունին: Դրա մի օրինակը Ամիւկ ամրոցի գրաւումն է. «Եւ ապա հնարեալ խորհուրդ մեծ՝ ի գիշերի գողանայ զամրոցն»[48]: Արաբները նոյնպէս լայնօրէն կիրառում էին յանկարծակի յարձակումների, հակառակորդի շրջապատման մարտավարութիւնը: Նրանք սովորաբար յարձակւում էին լուսաբացին, երբ հակառակորդի զօրքը խոր քնի մէջ էր[49]:

Յաղթանակ տանելու համար ոչ պակաս կարեւոր էր հետախուզութեան դերը, հակառակորդի տեղաշարժման, զօրքի քանակի, տեսակների վերաբերեալ տեղեկատուութիւնը: Արաբական եւ բիւզանդական հետախուզական համակարգերը բաւականին զարգացած էին, իսկ հայոց բանակում հետախուզութիւնը ժամանակ առ ժամանակ էր լաւ գործում: Հայոց բանակում կային հետախոյզներ, որոնք տեղեկութիւններ էին հաղորդում հակառակորդի վերաբերեալ: Սկզբնաղբիւրներում նրանք անուանւում են սուրհանդակներ, «կոչնական»-ներ, լրտեսներ[50]: Հետախուզութեան տուեալների ճիշտ օգտագործման դէպքում հայոց բանակը մշտապէս կարողանում էր ժամանակին հակահարուած հասցնել հակառակորդին եւ յաղթանակ տանել: Ատրպատականի ամիրայ Ափշինի՝ Հայաստանի վրայ յարձակուելու մասին Սմբատ Ա-ն նախօրօք է տեղեկանում, ինչը հնարաւորութիւն է տալիս զօրք հաւաքագրել եւ թշնամուն թոյլ չտալ երկիր մտնել. «Զոր վաղվաղակի արքային Սմբատայ զգացեալ զչարիմաց խարդաւանս Ափշնի՝ վաղվաղակի հրդան տայր զօրաց իւրոց նախարարակոյտ բազմութեամբ»[51]: Իւսուֆի առաջին արշաւանքի ժամանակ Սմբատ Ա-ն, տեղեկանալով արշաւանքի ուղղութեան մասին, զօրքով փակում է Աշոցքի եւ Տաշիրի մօտ գտնուող կիրճերն

44 Նոյն տեղում, էջ 246:

45 Նոյն տեղում, էջ 245:

46 Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 178:

47 Նոյն տեղում, էջ 311-312:

48 Նոյն տեղում, էջ 140-141:

49 Е. Разин, նշ. աշխ., էջ 109:

50 Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 202, 352, 466:

51 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 159:

ու ճանապարհները, որպէսզի թոյլ չտայ արաբներին մտնել Հայաստանի կենտրոնական շրջանները: Թէպէտ Իւսուֆին յաջողւում է շրջանցել հայկական բանակը եւ մտնել Շիրակ, այդուհանդերձ հայոց թագաւորը կարողանում է կանխել աւերածութիւնները. «Զայս իբրեւ լսէր արքայ՝ զօրաց բազմաց ի միասին հրդան տուեալ՝ երթեալ ունէր զկիրճսն եւ զնեղուցսն պոզոտայիցն կողմանցն Աշոցաց եւ Տաշրաց եւ ոչ տալ նմա թոյլ հետի աղագաւ անցանել...»[52]: Նոյնը չենք կարող ասել Թուզխի ճակատամարտի մասին, որտեղ հայոց բանակը պարտութիւն է կրում տեղեկատուութեան բացակայութեան եւ սխալ մարտավարութեան հետեւանքով: Սմբատ Ա-ն տեղեակ չէր հակառակորդի զինուած ուժերի գտնուելու վայրի, ծրագրերի մասին, տեղանքին ծանօթ չէր եւ հաւատում է Գագիկ Ապումրուանին, որը զօրքը առաջնորդում է քարքարոտ, անջրդի վայրերով, ինչի հետեւանքով զինուորները եւ ձիերը ուժասպառ են լինում[53]: Արճէշի ճակատամարտում հայերի պարտութեան գլխաւոր պատճառը հետախուզութեան տուեալների անտեսումն էր[54]: Հետախուզութեան վատ գործունէութեան մասին է վկայում սելջուկ-թիւրքերի անարգել առաջխաղացումը մինչեւ Նիգ գաւառ եւ սպարապետ Վասակ Պահլաւունու եւ բանակի անպատրաստ լինելը[55]:

Կարեւոր էր յատկապէս բանակատեղիի ամրացումը եւ պահապաններ նշանակելը: Դրանք այն հիմնական միջոցառումներն էին, որոնք կանխարգելում էին թշնամու յանկարծակի յարձակումները: Թուզխի ճակատամարտում պարտութեան պատճառներից էր նաեւ այն, որ հայկական բանակատեղը ամրացուած չէր, ըստ երեւոյթին պահապաններ չկային, որոնք նախօրօք տեղեակ կը պահէին հակառակորդի յարձակման մասին[56]: 904 թ. Մղունիս գիւղի ճակատամարտում Գուրգէն Արծրունու զօրքը պարտութիւն է կրում՝ հակառակորդի յարձակման վերաբերեալ անտեղեակութեան եւ չամրացուած բանակատեղիի պատճառով[57]: Արեան լճի ճակատամարտից առաջ, երբ հայոց զօրքը բանակ էր դրել շրջակայ գաւառների բնակչութեան հետ միասին, արաբների անակնկալ յարձակումներից խուսափելու համար գիշերային պահակներ էին կարգել՝ Ապումկդեմ Արծրունու գլխաւորութեամբ: Վերջիններս հսկում էին արաբական զօրքի տեղաշարժերը, նախապատրաստական աշխատանքները եւ երբ տեսնում են, որ արաբները ձիեր են հեծնում, շտապում են հայոց բանակ եւ զգուշացնում արաբական հնարաւոր յարձակման մասին: Բոլորը սպառազինւում են՝ պատրաստուելով մարտի[58]: Վարդանակերտի ճակատամարտից առաջ եւս հայոց զօրքը առաջինն է բանակ դնում եւ նախապատրաստական աշխատանքներ են իրականացնում, Վարդանակերտ աւանի փողոցները ամրացնում են, պահապաններ են նշանակում. «Իսկ զօրուն Հայոց ամրացուցեալ զփողոցս աւանին՝ կարգեցին ի վերայ պահապանս մինչեւ ի լուսանալ առաւօտին»[59]: Հետախուզութեան դերը կարեւորւում էր նաեւ նրանով, որ ճիշտ տեղեկատուութիւնը հնարաւորութիւն էր տալիս զօրքին ժամանակին հասնել մարտադաշտ, ուսումնասիրել տեղանքը, ընտրել յարմար բանակատեղի, նախապատրաստական աշխատանքներ կատարել, զօրքին հանգիստ տալ: Այսպէս, Ձկնավաճառի ճակատամարտում Սմբատ

52 Նոյն տեղում, էջ 195-196:

53 Նոյն տեղում, էջ 174-176:

54 Ղեւոնդ, *Պատմութիւն*, Սանկտ Պետերբուրգ, 1887, էջ 147:

55 Մատթէոս Ուռհայեցի, էջ 14:

56 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 174-176:

57 Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 402:

58 Նոյն տեղում, էջ 228:

59 Ղեւոնդ, էջ 24-25:

Ա-ի զօրքի պարտութեան պատճառներից մէկն այն էր, որ հակառակորդը արդէն բանակ էր դրել, երբ Սմբատ Ա-ի զօրքը, թագաժառանգներ Աշոտի եւ Մուշեղի գլխաւորութեամբ հասաւ ճակատամարտի վայր: Աշոտը եւ Մուշեղը չեն հասցնում զօրքին հանգիստ տալ, մարտակարգ կազմել: Մինչդեռ արաբները արագօրէն պատրաստւում են եւ անցնում յարձակման, ինչը եւ նրանց առաւելութիւն է տալիս: Մղուելիս գիւղի ճակատամարտում եւս զինուորների եւ ձիերի յոգնածութիւնը երկար ճանապարհից, որը նրանք անցել էին ողջ գիշերուայ ընթացքում, թոյլ չի տալիս պատշաճ դիմադրութիւն ցոյց տալ հակառակորդին:

Հայոց բանակում կիրառուել են նաեւ մարտավարական այլ հնարքներ, որոնց նպատակը զինուորների բարոյահոգեբանական վիճակը բարձր մակարդակի վրայ պահելն էր: Զօրքի մարտական ոգին բարձրացնում էին մարտակոչերով եւ դոռում-գոչիւններով յարձակուելով, ճակատամարտերից առաջ թմբուկներ զարկելով, փողեր հնչեցնելով, զէնքերն իրար հարուածելով: Մուսա իբն Զուրարայի եւ Բագարատ Բագրատունու միջեւ ճակատամարտից առաջ վահանաւորները եւ նիզակաւորները գոչում էին. «վահանաւորքն եւ նիզակաւորքն գոչէին»[60]: Արճուճքի ճակատամարտի մասին խօսելիս պատմիչը շեշտում է Աշոտ Արծրունու զօրքի յարձակուելը արաբների վրայ «արիական ձայնարկութեամբ»[61]: Աշոտ Բ-ն յաճախ էր կիրառում այս հնարները եւ բազմիցս յաղթանակներ էր տանում[62]:

Այսպիսով, Բագրատունեաց շրջանի բանակի մարտավարութիւնը բաւականաչափ բազմազան էր, մարտավարական եղանակները եւ առանձնայատկութիւնները պայմանաւորուած էին կոնկրետ իրադրութեամբ եւ նպատակ ունէին ապահովել հայոց զօրքի վերջնական յաղթանակը:

60 Թովմա Արծրունի եւ Անանուն, էջ 174:

61 Նոյն տեղում, էջ 178:

62 Յովհաննէս Դրասխանակերտցի, էջ 313:

ՀԱՅ-ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ԽԶՈՒՄԸ (ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ)

Արամ Յովհաննիսեան

Հայ-մոնղոլական յարաբերութիւնների ուսումնասիրութիւնը Կիլիկիայի հայկական թագաւորութեան պատմութեան կարեւոր խնդիրներից մէկն է: Յայտնի է, որ հայկական թագաւորութեան քաղաքական եւ տնտեսական կեանքում մեծ դերակատարում ունէին մոնղոլները, որոնք դեռեւս ԺԳ. դարի կէսերից զինական համագործակցութեան մէջ մտան հայերի հետ: Հայկական թագաւորութիւնը, դաշնակցելով մոնղոլների հետ, ներգրաւուեց Եգիպտոսի սուլթանութեան դէմ պայքարում, որն ի վերջոյ ունեցաւ ողբերգական հետեւանքներ Կիլիկեան պետութեան համար: Մինչեւ օրս էլ արդի պատմագիտութեան մէջ բաւարար կերպով ուսումնասիրուած չեն հայ-մոնղոլական յարաբերութիւնները, իսկ դաշինքի խզման մասին ընդհանրապէս ուսումնասիրութիւն գոյութիւն չունի: Ներկայ հետազօտութեան նպատակն է լրացնել այդ բացը:

ԺԴ. դարի սկզբներին նոր տեղաշարժեր կատարուեցին Մերձաւոր արեւելքի քաղաքական կեանքում, որոնք չափազանց աննպաստ էին նաեւ Կիլիկիայի հայկական թագաւորութեան համար: Խնդիրն այն է, որ եւրոպական պետութիւնների միջեւ լարուած յարաբերութիւնների հետեւանքով գրեթէ վերացան խաչակրաց նոր արշաւանք կազմակերպելու յոյսերը: Իրական օգնութիւն ցոյց տալու փոխարէն՝ եւրոպական երկրների միապետերը եւ Հռոմի պապը ձգտում էին աւելի ընդարձակել Կիլիկիայում իրենց ազդեցութեան ոլորտները եւ, նամակներ առաքելով ու ֆինանսական օժանդակութիւն ցոյց տալով, լուծել իրենց յուզող քաղաքական ու տնտեսական խնդիրները: Բացի այդ՝ այս շրջանում աւելի խորացաւ Կիլիկիայի գլխաւոր դաշնակից Մոնղոլական իլխանութեան համընդհանուր ճգնաժամը: Նման պայմաններում մամլուքեան վտանգն աւելի ուժեղացաւ:

Կիլիկեան Հայաստանի եւ մոնղոլների դաշինքի խզումը կապուած է Փիլարդուի ենդ դաւադրութեան հետ: 1307 թ. նոյեմբերի 17-ին (18) Կիլիկիայում մոնղոլական զօրքերի հրամանատար Փիլարդուն, որը մահմեդականութիւն էր ընդունել, քաջալերուելով երկրում տիրող դրութիւնից, ձեռնարկեց դաւադրութիւն. հիւրասիրութեան պատրուակով իր մօտ՝ Անարզաբա քաղաք հրաւիրեց Լեւոն Դ. արքային, Հեթում թագաւորահօրը եւ 40 ականաւոր իշխանների, այդ թւում՝ Օշին սպարապետին, Հեթումի եղբօրորդի պարոն Թորոսին եւ կազմակերպեց նրանց սպանութիւնը[1]. «Ի

1 Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք ի գրոց պատմագրաց*, Վաղարշապատ, 1893, էջ 156. Սմբատ Սպարապետ, *Պատմութիւն*, Մոսկուա, 1856, էջ 119. *Մանր ժամանակագրութիւններ*, կազմեց Վ. Յակոբեանը, հտ. Բ, Երեւան, 1956, էջ 88-89. Աբուլ-Ֆիդա, Յակուտ ալ Համաւի,- *Արաբական աղբիւրները Հայաստանի եւ հարեւան երկրների մասին*, կազմեց՝ Հ. Նալբանդեանը, Երեւան, 1965, էջ 245-246. *ԺԴ դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ*, կազմեց Լ. Խաչիկեանը, Երեւան, 1950, էջ 55: Այդ մասին տես նաեւ՝ Ս. Բոռնազեան, *Կիլիկիայի հայկական թագաւորութեան ներքին եւ միջազգային դրութիւնը XIII դարի վերջերին եւ XIV դարի սկզբին*. Գ. Միքայէլեան, *Կիլիկիայի հայկական պետութեան պատմութիւն*, Երեւան, 2007, էջ 442. *Հայ ժողովրդի պատմութիւն*, հտ. Գ, Երեւան, 1976, էջ 767. Կ. Մութաֆեան, *Կիլիկիան կայսրութիւնների խաչմերուկում*, Երեւան, 2001, էջ 460. Ա. Սուքիասեան, *Կիլիկիայի հայկական*